ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/188

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցում, տպագրության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11389-2020 գրությամբ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2344-2020 գրության հիման վրա, 30.07.2020թ.-ին «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.07.2020թ.-ին:

30.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/188 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

06.08.2020թ.-ին և 12.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.08.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.08.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.07.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2344-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մոնոպրինտ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի

միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Նույն մասի 8.18 կետի համաձայն.

«Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնա¬կիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստա¬թղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1՝ Դիմում-հայտարարություն, որում առկա է եղել ոչ ակտիվ էլեկտրոնային թվային ստորագրության պատկեր, որով չի հավաստվել Մասնակցի կողմից Հավելված 1՝ Դիմում-հայտարարությունը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած լինելը:

Նույն մասի 2.6 կետի համաձայն.

«Եթե հայտը ներկայացնում է լիազորված անձը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է լիազորագիր, որում լիազորված անձին ներկայացված լիազորագրով վերապահված են այլ լիազորություններ, որոնք չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ըստ ներկայացված լիազորագրի՝ ««Մոնոպրինտ» ՍՊԸ տնօրենը լիազորում է անձին էլեկտրոնային ստորագրել N «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակցի կողմից լիազորված անձին հայտը ներկայացնելիս պետք էր վերապահված լիներին «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ Մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը հաստատելու լիազորություններ, այնինչ դրանք նշված չեն եղել ներկայացված լիազորագրում:

Մասնակցի լիազորագիրը ներկայացված չի եղել հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, այնինչ անհրաժեշտ էր ներկայացնել Տնօրենի ստորագրությամբ և Մասնակցի կնիքով հաստատված լիազորագրի՝ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Նույն մասի 8.10 կետի համաձայն.

«Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունները, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»

Ընթացակարգով սահմանված ժամկետում Մասնակցի կողմից վերոնշյալ անհամապատասխանությունները չեն շտկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել է վերջինիս հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մոնոպրինտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մոնոպրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11389-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին, 4-րդ, 7-րդ և 47-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ի կողմից հավելված 1-ով ներկայացվել է դիմում-հայտարարություն, որը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ դիմում-հայտարարության մեջ առկա է ոչ ակտիվ էլեկտրոնային թվային ստորագրության պատկեր, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Ըստ սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.18-րդ կետի՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտ է «Մոնոպրինտ» ՍՊԸ կողմից հավելված 1-ով ներկայացված դիմում-հայտարարությունը հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մասնակցի կողմից ներկայացված լիազորագրով լիազորված անձին վերապահված են այլ լիազորություններ, որոնք չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին: Սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.6 կետի համաձայն՝ եթե հայտը ներկայացնում է լիազորված անձը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ: Ըստ ներկայացված լիազորագրի՝ ««Մոնոպրինտ» ՍՊԸ տնօրենը լիազորում է անձին էլեկտրոնային ստորագրել թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը»:

Վերոգրյալով պայմանավորված՝ մասնակցի կողմից լիազորված անձին հայտը ներկայացնելիս պետք էր վերապահված լինեին «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը հաստատելու լիազորություններ, այնինչ դրանք նշված չեն ներկայացված լիազորագրում: Բացի այդ, ներկայացված լիազորագիրը ներկայացված չէ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ուստի անհրաժեշտ է ներկայացնել տնօրենի ստորագրությամբ և «Մոնոպրինտ» ՍՊԸ կնիքով

հաստատված լիազորագրի՝ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը::

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցրնել նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 17.07.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի monoprint1@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ 23.07.2020թ.-ին կայացած նիստում արձանագրվել է, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն արձանագրության 2.3 կետով նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11389-2020 գրությամբ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ կետի համաձայն՝ … գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 8.18-րդ կետի համաձայն՝ … Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրա-պետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին, 4-րդ, 7-րդ և 47-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 13.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ի կողմից հավելված 1-ով ներկայացվել է դիմում-հայտարարություն, որը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ դիմում-հայտարարության մեջ առկա է ոչ ակտիվ էլեկտրոնային թվային ստորագրության պատկեր, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտ է «Մոնոպրինտ» ՍՊԸ կողմից հավելված 1-ով ներկայացված դիմում-հայտարարությունը հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մասնակցի կողմից ներկայացված լիազորագրով լիազորված անձին վերապահված են այլ լիազորություններ, որոնք չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին: Ըստ ներկայացված լիազորագրի՝ «Մոնոպրինտ» ՍՊԸ տնօրենը լիազորում է անձին էլեկտրոնային ստորագրել թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը:

Վերոգրյալով պայմանավորված՝ մասնակցի կողմից լիազորված անձին հայտը ներկայացնելիս պետք էր վերապահված լինեին «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-8/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը հաստատելու լիազորություններ, այնինչ դրանք նշված չեն ներկայացված լիազորագրում: Բացի այդ, ներկայացված լիազորագիրը ներկայացված չէ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ուստի անհրաժեշտ է ներկայացնել տնօրենի ստորագրությամբ և «Մոնոպրինտ» ՍՊԸ կնիքով

հաստատված լիազորագրի՝ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցրնել նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 17.07.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի monoprint1@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Հանձնաժողովի 23.07.2020թ.-ին կայացած նիստում արձանագրվել է, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն արձանագրության 2.3 կետով նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի

կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ

կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11389-2020 գրությամբ «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/188 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մոնոպրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**